

ԴԱԿԻԹ ԳՅՈՒՐԶԻՆՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԱՆՎԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ՅԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Մեսրոպ Մաշտոցը հանճարեղ գիտնական է, հայկական գրանշանների սրելծողը, հայոց դպրության և հայ ինքնություն գրականության հիմնադիրը, Ե. դարում Նայաս-պանում ծավալված թարգմանական հզոր շարժման սկզբնավորողը, Աստվածաշունչ մարյանի թարգմանիչը: Նա քրիստոնեության բարոյիչ է, վարդապետ, շարականագիր, Նայասպանյայց Առաքելական Եկեղեցու պոնեֆիստը:

Նայ մաքենագրության մեջ մինչև Է. դարը նա հայտնի է առավելաբար *Մաշտոց* անունով, Է.-Ժ. դարերում գործածվել են թե՛ *Մաշտոց* և թե՛ *Մեսրոպ* անունները (տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների երկերում՝ նաև սրանց հնչյունական տարբերակները՝ *Մեսրոպյ, Մեսրոպր, Մեսրոք, Մաշթոց, Մաշդոց, Մաժդոց*), Բ. դարից սկսած՝ այս երկու անուններն սկսեցին գործածել համարելով *Մեսրոպ Մաշտոց*¹:

Նայ իրականության մեջ *Մեսրոպ Մաշտոց* անունն ամբողջությամբ, ինչպես նաև նրա բաղադրիչներն առանձնաբար խորհրդանշի արժեք են ձեռք բերել, հայ դպրության, գիտության և մշակույթի, առհասարակ հայ ինքնության խորհրդանշի (սխալված չենք լինի, եթե ասենք, որ նման ընկալում ունեն նաև օտարները): Եւ բոլորովին էլ պարահական չէ, որ հայ մշակույթի ամենաերևելի դեմքի, Նայ Եկեղեցու սրբի անունը հիմք է դարձել բառային բազմաթիվ միավորների, որոնց մի մասը նաև բառարանային գրանցում է ստացել², մի քանիսն ակտիվ գործածության մեջ են:

Բառակազմական արժեքի փեսանկյունից *Մեսրոպ Մաշտոց* բաղադրյալ անունն առանձնահատուկ է հայոց մյուս մեծերի անունների համեմատությամբ: Եթե մյուս անուններից հատուկենք բառեր են բաղադրվել (*հայկյան, դավթադեմ, լուսավորչական, խորենացիագեղ* և այլն), ապա այս դեպքում գործ ունենք մի քանի տասնյակ բառա-

1 Նմմ. Տր. Աճառյան, Նայոց գրերը, Երևան, 1984, էջ 299-302. «Քրիստոնյա Նայասպան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 720: Խիստ հազվադեպ պատահում է անգամ *Մեսրոպ-Մաշտոց* տարբերակով (գծիկով գրությամբ), որը մերժելի է: Օրինակ՝ Նիմուկեով տոմարական անվիճելի հաշիվների վրա՝ *Մեսրոպ-Մաշտոցի*, ինչպես և Սահակ Կաթողիկոսի մահվան տարեթիվը, ամսաթիվը և օրը ճշգրիվ որոշել է Ֆրանսիական գիտնական Դյուպորիեն (*Ն. Մանանդյան*, Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնությունության համար / «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երևան, 1962, էջ 88): Բանասերեղձական խոսքում մեզ հանդիպել է նաև շրջուն շարադասությամբ: Այսպես՝ Ողջոյն քեզի, *Մաշտոց Մեսրոպ*, Նազարամեայ կարմիր տրոփ... (*Ժազ Նակոբյան*, Մեսրոպապրոփ, Կահիրե, 1993, էջ 24):

2 Դավիթ Գյուրջիյան, Մեսրոպ Մաշտոց անվան բաղադրիչներով կազմված բառերի բառարանային մշակումը. «Էջմիածին», 2013, Ե., էջ 60-75:

յին միավորների հետ (մենք առ այսօր արձանագրել ենք այդպիսի 99 բառ): Մա, անպարակույս, Սուրբ Մեսրոպի անձի և գործի նկարմամբ հստակ վերաբերմունքի դրսևորում է:

Առաջին դիտարկումը, որ կարող ենք անել, բառակազմության մեջ հանդես են գալիս անվան այսօր ընդունելի համարվող *Մեսրոպ* և *Մաշտոց* փաբերակները միայն, մյուս փաբերակներով կազմություններ հայտնի չեն:

Սույն հեղափոխությամբ կվորձենք պարասխանել հերկյալ հարցերին՝ ե՞րբ են սրելովիկ (գործածության մեջ մտնել կամ հայտնի դարձել) *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով կազմված բառերը, ովքե՞ր են այդ բառերի հեղինակները: Բառաքննական որոնումների շնորհիվ շատ դեպքերում հնարավոր է լինում ստանալ այս հարցերի պատասխանները, որ կարևոր է հայերենի բառակազմության պարմության և հայերենի պարմական բառարանի համար:

Նոր և Առձեռն Հայկազյան, ինչպես նաև գրաբարի մյուս բառարանները *Մեսրոպ Մաշտոց* անվան բաղադրիչներով բառեր չեն արձանագրել: Այդպիսիք չկան նաև գրաբարի նորահայտ բառերի բառարաններում, միջին հայերենի բառարանում ևս: Արդյո՞ք սա հիմք է փալիս եզրակացնելու, թե մեր լեզվի զարգացման գրաբարյան և միջինհայերենյան շրջաններում *Մեսրոպ* և *Մաշտոց* անունները բառակազմական հիմք չեն դարձել: Պարզվում է՝ չպետք է շտապ եզրակացություններ անել:

Մեսրոպյան բառը *Մեսրոպեան* նշանագիրը բառակապակցության մեջ հանդիպում է Մովսես Խորենացու «Պարմութիւն Հայոց» երկի երրորդ գրքում («Յաղագս *Մեսրոպեան* նշանագրացն, ի վերնոյն փութիոց շնորհաց» (Մեսրոպյան նշանագրերի մասին, որ փրվեցին երկնային շնորհով)³: Բերված հարվածը վերնագիր է:

Խորենացին իր երկի բուն տեքստում *Մեսրոպեան* բառը չի գործածել, այլ 32 անգամ *Մեսրոպ* և միայն մեկ անգամ՝ *Մաշտոց*⁴:

Կարծիք կա, որ Քերթոզահոր Պարմության մեզ հայտնի գլխակարգումը կատարել է անհայտ խմբագիրը հավանաբար Թ. դարի երրորդ և Ժ. դարի առաջին քառորդների միջև ընկած ժամանակահատվածում, որ «գլխակարգման հեղինակային չափանիշից բացի եղել է նաև որոշ ենթահատվածների (ոչ գլուխների) վերնագրման մի սկզբունք, ըստ որի՝ վերնագիրը պետք է լիներ ոչ թե բնագրի այս կամ այն կողմը շեշտող, կրկնող արեղեկաբանական կցորդ՝ իբրև բովանդակային ցանկի միավոր, ինչպես որ է ներկայում, այլ պետք է ունենար բնագրի անբաժանելի մասին հարույլ հաղորդակցական արժեք», բայց և՛ «Դարելով վերնագրային հերթերից՝ կարելի է ենթադրել, որ պարմագրքի գլուխները համարակալելուց զար, Խորենացին երբեմն գլուխների ներսում որոշ փոքր հարվածների համար միջանկյալ վերնագրային նշումներ է արել»⁵:

3 «Մովսիսի Խորենացու Պարմութիւն Հայոց», Երևան, 1981, էջ 404-405 (քննական բնագիրը՝ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Սյր. Մալխասյանցի):

4 Հայկական համալսարան 7, Մովսիսի Խորենացու Պարմութիւն Հայոց, հ. 2 (կազմեցին Օ. Մ. Խաչատրյանը, Ա. Գ. Բաղդասարյանը), Երևան, 1976, էջ 400-401:

5 Արթուրի Սահակյան, Մովսես Խորենացու «Հայոց պարմութեան» գլխակարգումը որպես բնագրի վերջնական խմբագրում / Լևոն Խաչիկյան 90. Նյութեր Մարենադարանի հիմնադիր փոփոխի ծննդյան

Եթե հաշվի չենք առնում այս կարծիքը, ապա *Մեարույթան* բառն աներկբա Ե. դարի ծնունդ է, հեղինակը *Քերթողահայր* Մովսես Խոբենացին է: Վերոհիշյալ կարծիքն ընդունելու դեպքում անգամ այս բառը ժամանակագրորեն կրկին առաջինն է, միայն թե նրա ի հայտ գալն այդ պարագայում կարող է առնչվել Թ. դարին, հեղինակը՝ անհայտ:

Երկու դեպքում էլ ժամանակագրական առումով *Մեարույթ* բաղադրիչով առաջին կազմությունը *-հան / -յան* վերջածանցով բաղադրված *Մեարույթան / մեարույթան* «Մեարույթի սրելոժած՝ մշակած» ածականն է:

Զարմանալի չէ, որ նոր ժամանակներում էլ սկզբնապես գործածության մեջ էր հենց *Մեարույթան* բառը: ԺԹ. դարի կեսերին գիտական և գեղարվեստական խոսքում սրա գործածությունը սովորական էր: Օրինակներ՝ «...մանաւանդ որ բառական յայտին է թէ Գողթան երգիչները (որոնց լեզուն *Մեարույթան* լեզուին հետ նոյն է) եթէ ոչ թագաւորական բանաստեղծներ էին, գոնէ նոյն արքունեաց հետ յարաբերութեան մէջ էին» (հ. Արսեն վրդ. Այրբընեան)⁶:

Նոր լուսաճնմ նշանը վառ,

Էջմիածնից Օշական

Դագաղին վրա բռնած պար՝

Զէ՛ր բուն լույսը *Մեարույթան* (Միքայել Նալբանդյան, Սուրբ Մեսրովքի փոխին)⁷:

Նամենադարբար հին է նաև *Մաշտոցեան / մաշտոցյան* բառը, որ կազմվել է *մեարույթան* -ի համարանությամբ: Նստակ է, որ ԺԹ. դարի վերջերին այդ կազմությունն արդեն գոյություն ուներ, թեպետ մեր ձեռքի փակ եղած օրինակում այն գրական հերոսի ազգանունն է. հանդիպում է Մուրացանի «Ի՛նչ լայեղ է» պարմվածքում (1885 թ.): Օրինակ՝ «Մի բանի խոսք պարուն Արսեն *Մաշտոցյանի* մասին⁸»: Բառի «կենսագրության» համար կարևորն այն է, որ բառակազմական բայլ է կատարվել, և բոլորովին էլ էական չէ՝ նորակազմությունը հասարակ, թե՛ հայրուկ անուն է:

Գրեթե նույն ժամանակահատվածում *մաշտոցյան* բառը նաև գիտական լեզվում է գործածվել՝ իբրև փերմինոլային բառակապակցության միավոր՝ *Մաշտոցեան* լեզուն (հ. Նովսեփ Գաթրոճյան)⁹:

Քանի դեռ մեր փրամադրության փակ *Մաշտոցեան* բառի գործածության ավելի վաղ վկայություններ չունենք (հայոց լեզվի պարմական բառարանի կամ հայերենի բառապաշարի էլեկտրոնային շրջմարանի առկայության դեպքում այս և նման կարգի բազմաթիվ հարցեր հեշտությամբ կլուծվեին), ապա նրա կազմությունը պիտի վերագրել

իննսունամյակյին նվիրված միջազգային գիտաժողովի, Երևան, 2010, էջ 254:

6 Ն. Արսեն վրդ. Այրբընեան, Քննական քերականության աշխարհաբար լեզուի, Վիեննա, 1866, էջ 46:

7 Բանաստեղծությունն առաջին անգամ լույս է փնտել հեղինակի մահից (1866 թ.) բավական ուշ՝ 1895 թվականին «Նանդես գրականական և պարմական»-ի 6-րդ գրքում (Մ. Նալբանդյան, Երկեր, Երևան, 1985, էջ 627):

8 Մուրացան, Պարմվածքներ, Երևան, 1960, էջ 157:

9 Տե՛ս «Նանդես ամսօրենյ», 1913, էջ 719-723 («Մաշտոցեան լեզուն» հարված է անդիպ աշխարհությունից. հրատարակվել է հայագետի մահից (1882) շար փարիներ անց):

ԺԹ. դարի վերջին բառորդին՝ նշելով մի կողմից Վիեննայի Միախառնյան միաբանության անդամ հայր Նովսեփ Գաթրոնյանի, մյուս կողմից՝ արձակագիր Մուրացանի անունները՝ իբրև բառի առաջին գործածողների:

Միանգամայն հասկանալի է, թե ինչու են առաջին կազմությունները ստեղծվել *-եան* վերջածանցով. սա բառակազմորեն ամենապարզ և դյուրին բայել էր: Այս ածանցով կազմությունները սերտորեն աղերսվում են տրամաբանական հոլովածին՝ *Մեարտակեան* = Մեարտակ, *Մաշտոցյան* = Մաշտոցի: Բառարանային «Մեարտակ / Մաշտոցի ստեղծած՝ մշակած, հիմնադրած, Մեարտակ Մաշտոցին բնորոշ, նրան վերաբերող» խմաստները հետագայում են ձևավորվել և ամրակայվել բառի խմաստային կառուցվածքում:

Ըստ բառարանային տվյալների և մեզ հայտնի (նաև հասանելի) բնագրային գործածությունների վկայությունների՝ կարելի է ասել, որ *Մեարտակ* և *Մաշտոց* բաղադրիչներով մնացած բոլոր բառերը նոր և նորագույն ժամանակների բառակազմական իրողություններ են: Որպես կանոն՝ դրանք ստեղծվել են հայերենի բառակազմական օրինաչափությունների հիման վրա՝ հիմնականում համապատասխան կադապրներով կազմված բառերի համաբանությամբ (կամ նմանակությամբ): Այդ բառերի գերակշռող մեծամասնությունն է. դարի ծնունդ է, իսկ մի քանիսը՝ ԻԱ. դարի այս տարիների, մեկ-երկուսը՝ մեր օրերի:

Մեարտակ և *Մաշտոց* բաղադրիչներով կազմված բառերի մեջ գործածության հաճախականությամբ առանձնանում է հարկապես *մեարտակապատ* բառը: Կարելի է ասել՝ այն հավասարապես գործածվում է մի շարք ոլորտներում՝ գեղարվեստական (բանաստեղծական), հրապարակախոսական, գիտական: Այսօր *մեարտակապատ* -ը համագործածական բառ է դարձել մասնավորապես համացանցում մեարտակապատ-հայապատ, լսարկապատ, ռուսապատ գրելու բանավեճերի և քննարկումների հետևանքով:

Նայելիս են բառի գործածության բազմաօրինակներ: Անցյալ դարի 1960-ականներին գործածողներից են լեզվաբան Գուրգեն Սևակը, բանաստեղծներ Սիլվա Կապուրիկյանը, Վահագն Դավթյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը և այլք, փարիզյան «Յառաջ»-ը և երևանյան «Գրական թերթը»: Նանրությանն առավել հայտնի են Նաիրի Զարյանի դասագրքային «Նայոց լեզուն» բանաստեղծության հետևյալ տողերը.

Քանի՛ ցեղեր ցամաքեցին, ինչպես հեղեղն ավազի մեջ,

Բայց լենինյան¹⁰ ծովին հասավ *մեարտակապատ* հայոց լեզուն:

Մեր կարծիքով հենց սա է բառի առաջին գործածությունը. Ն. Զարյանի բանաստեղծությունն առաջին անգամ լույս է տեսել 1943-ին¹¹: Բանաստեղծի երկերի քառահա-

10 Մեր օրերում գաղափարախոսական պարճառներով այս բառի փոխարեն հաճախ գրում են *նոր դարի*՝ խմբագրելով հեղինակային տեքստը, իսկ ոմանք էլ *լենինյան* բառի պարճառով գեղջում են ինչպա տողերը:

11 Տե՛ս «Սովետական գրականություն և արվեստ» հանդես, Երևան, 1943, հ. 2 (Ս. Դարոնյանի «Նաիրի Զարյան. կյանքը և գործունեությունը» գրքի (Երևան, 1982, էջ 224) միջնորդությամբ), արժարկով էլ «Սովետական ռազմիկ», 7 սեպտեմբերի, 1943 թ. (Ն. Զարյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երևան, 1984, էջ 13. Ս. Դարոնյանի առաջաբանը):

յրորյակում բանաստեղծության փակ նշված է գրելու (այսինքն՝ նաև բառի ստեղծման) ամիսը ևս՝ հունիս:

Թե ինչու *Մեսրոպ* և *Մաշտոց* բաղադրիչներով բառերի ստեղծման «գոնկում» արձանագրվեց հատկապես վերջին երկու դարում, մի քանի պատճառ կարող ենք նշել:

Նախ՝ հայկական պետականության ամփոփությունը և հայերենի՝ պետական լեզվի կարգավիճակ ստանալու ու Մաշտոցի գործի ըստ ամենայնի կարևորումը (խորհրդային ժամանակաշրջանում՝ որպես ազգապահպան գործոնի, լեզվական-մշակութային ինքնությունության պահպանման հզոր կոմանի):

Երկրորդ՝ 1915-ի ցեղասպանությունից հետո ձևավորված հայկական Սփյուռքի պայմաններում հայոց լեզվի պահպանմանն ուղղված ջանքերի գործադրումը և հայ գրերի ստեղծողի և հայերենի առաջին ուսուցչի վեհ օրինակի վկայակոչումը: Պարահական չէ, որ *Մեսրոպ* և *Մաշտոց* բաղադրիչներով բառերի ստեղծողների շարքում են սփյուռքյան երևելի հոգևորականներ, բանաստեղծներ, հրապարակախոսներ, ինչպիսիք են՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Երկրորդ (հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս), Ժագ Հակոբյան, Մուշեղ Իշխան, Զահրապ, Զարեհ Խրախունի (նրանց ստեղծած բառերին կանոդադառնանք ստորև):

Երրորդ՝ հայության երկու հատվածներում էլ Մաշտոցի վերածվելը ազգային գրի, դպրության և մշակույթի խորհրդանիշի:

Չորրորդ՝ հայ գրերի գյուրի, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հորեղանիների համազգային նշումը և լայն արձագանքը: Այսպես, օրինակ՝ **մեսրոպագուն** «Մեսրոպից սերած, Մեսրոպի գարմին պարկանող» բառն առաջին անգամ գործածվել է Վահագն Դավթյանի «Ասք Մաշտոցի մասին» ստեղծագործության մեջ, որը գրվել է 1962-ին, երբ նշվում էր Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Ապրեց մեր լեզուն,

Ոսկեղենիկը մեր *մեսրոպագուն*¹²:

1963-ին Սուրբ Ղազարում լույս տեսավ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ և Վահան Հովհաննեսյանի «Մաշտոցական» վերնագրով բանաստեղծությունների գրքույկը՝ նվիրված Ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակին: *Մաշտոցական* բառը սրան նախորդող այլ սկզբնաղբյուրներում չենք գտնում:

Հինգերորդ, որն ի պարբերություն նախորդների՝ գուր լեզվական բնույթ ունի՝ *Մեսրոպ* և *Մաշտոց* անվանական բաղադրիչներով բառաստեղծական որոշակի ավանդույթի ձևավորումը և զարգացումը: Այս դեպքում գործում է նաև համաբանության օրենքը: Ասենք՝ կա *մեսրոպաստեղծ* բառը, նրա նմանակությամբ կազմվում է *մաշտոցաստեղծ*-ը: Նույնը նաև հակառակ ուղղությամբ՝ *մաշտոցագեղ* - *մեսրոպագեղ*:

Առհասարակ բառաստեղծման քիչ թև չար ճշգրիտ ժամանակը և բառը կազմողին պարզելը որոշակի դժվարություններ է հարուցում: Հաճախ էլ արված եզրահանգումները ժամանակի ընթացքում նոր փաստեր երևան գալու ազդեցությամբ վերանայվում են:

12 Վ. Դավթյան, Ամառային ամսյուր, Երևան, 1964, էջ 132, 138:

Նախ անհրաժեշտ է առավել հարուստ փաստական նյութ ունենալ (ԱՐԵՎԱԿԻ¹³ հնարավորությունները որքան էլ հզոր են, այս փեսանկյունից, սակայն, փակավիճակի սահմանափակ են: Միաժամանակ չափի մոռանալ, որ ԱՐԵՎԱԿ-ն ընդգրկում է միայն արևելահայերենի նյութը, այնինչ այս կամ այն բառը կարող է ծնունդ առած լինել արևմտահայերենում): Մեկ օրինակ, կորպուսում **մեսրոպաշունչ** «մեսրոպյան ոգով, մեսրոպյան սկզբունքներին ու ոգուն համապատասխանող» բառի վկայություններ կան, որոնք ամենավաղ թվագրումները վերաբերում են անցյալ դարի 60-ական թվականներին: Այսպես.

...հայոց **մեսրոպաշունչ** խաղաղաբույր բանաստեղծուհին իմ բույրն է քաղցրաբարբառ և ես ալ անոր նվիրյալ եղբայրը (Սիրվա Կասպուրիկյան, Զարավանները դեռ քայլում են, առաջին անգամ հրապարակվել է 1964-ին):

...**մեսրոպաշունչ** մի ձոն «հայ գրերի հավերժական գորաբանակ ստեղծող սպառապետ» Մեսրոպ Մաշտոցին («Գրական թերթ», 02.07.1965):

Նաև արևմտահայերեն՝ «Մեր մայրերը, աննկարագրելի պայմաններու փակ, աքսորի մէջ, առգնեթու վրայ ուսուցին մայրենի լեզուն, իսկ ինչ և հայրենիքի մէջ՝ անըմբռնելի օտարամտութեան մը կեր կը դարձնեն **մեսրոպաշունչ** ևս աստուածահաճոյ մեր սրբութիւնը» («Յառաջ», 10.07.1967):

Առաջին հայացքից թվում է՝ հենց այդ փաստամյակի վրա պիտի կենտրոնանալ:

Նարցը, սակայն, այլ կերպ է լուծվում. սփյուռքահայ բանաստեղծ Ժագ Նախբեյալը 1946-ին Կահիրեում հրապարակել է հայրենասիրական քերթվածների մի հավաքակ՝ «**Մեսրոպաշունչ**» վերնագրով («**Մեսրոպաշունչ**» է կոչվում գրքի վերջին բանաստեղծությունը): Ուստի՝ նորակազմության հեղինակ նրան պիտի համարել (և թե, իհարկե, այլ փաստեր մեջտեղ չգան):

Այս բառի օրինակը միաժամանակ լավագույնս ցուցադրում է, որ բառը կարող է կազմվել հայերենի տարբերակներից մեկում, ապա անմիջապես անցնել մյուսին, բնական ու հարազատ հնչելով՝ դառնալ համահայերենյան: Որոշ դեպքերում նույնիսկ դժվար է որոշել, թե հարկապես ո՞ր «տարածքի» ծնունդ է այս կամ այն բառը: Մա նշանակում է, որ բառակազմական այս գործընթացը և նրա արգասիք իրողությունները հայերենի որևէ տարբերակով չեն սահմանափակվում: Փաստերը հուշում են, որ գրական հայերենի երկու տարբերակների միջև բառակազմական ակնհայտ փոխադրություններ կան:

Ի դեպ, **մեսրոպաշունչ** բառի հետ նույն տարվա ծնունդ է (այս անգամ հանդիպում է արևելահայ բանաստեղծական խոսքում) **մեսրոպաշար** «Մեսրոպի կողմից շարված՝ դասավորված» ածականը, որի ընդամենը մեկ գործածություն է մեզ հայտնի.

Դարեր ապրած մագաղաթյա

Մեր մարդանների

¹³ www.eanc.net (Արևելահայերենի ազգային կորպուս, որն ունի 110 միլիոն բառամթերք, ընդգրկում է ԺԹ, դարի կետերից մինչև մեր օրերն ստեղծված արևելահայերեն տեքստեր՝ գեղարվեստական, գիտական, մամուլ և այլն): Բառի ստեղծման ժամանակը և հեղինակին որոշելու հարցում կարևոր նշանակություն ունի մամուլի էջերում տիպված հսկայածավալ նյութի հաշվառումը: Իսկ այդ նյութի զգալի մասը դեռևս թվայնացված չէ:

Մեսրոպաշար, արդարախոս

Գրերն են անուշ (Գեղամ Սարյան, Տաղ Նայասպանին)¹⁴:

Բնականաբար, բառակերպման ժամանակը և հեղինակին որոշելու գործը դյուրանում է հարկապես նման դեպքերում, երբ մեզ հերաբրբորդ բաղադրիչներով կազմված բառը գործածված է լինում միայն մեկ անգամ (ավելի զգուշավոր կարելի է ձևակերպել այսպես՝ երբ մեզ հայրենի է բառի ընդամենը մեկ գործածություն):

Նույն կերպ որոշակիորեն կարող ենք ասել, որ *մեսրոպասիյուն* «Մեսրոպ Մաշտոցի կողմից սրբեցված» բառի հեղինակը մեծ բառասրեղծ Գարեգին Ա. Ամենայն Նայոց երջանկահիշարակ Կաթողիկոսն է (...որի օր զօրացող ապրումներն ու կեցվածքը *մեսրոպասիյուն* թելով ձեզ կը կապեն Նայ Գիրքին¹⁵), բանի որ այլ վկայություն կարծեք թե չունենք:

Գարեգին Ա. Ամենայն Նայոց Կաթողիկոսի նորակազմությունների և իմաստային նորարարությունների բառարանում այդպիսիք են համարվում 12 բառեր՝ *մաշտոցաշունչ*, *մեսրոպարար*, *մեսրոպարարբառ*, *մեսրոպարույր*, *մեսրոպագիծ*, *մեսրոպածին*, *մեսրոպահեղ*, *մեսրոպասիյուն*, *մեսրոպահունչ*, *մեսրոպանման*, *մեսրոպասնունդ*, *մեսրոպասսրեղծ*¹⁶:

Նկատելի է, որ բառաքնական մանրակրկիտ պրպրումները որոշ սրբագրումներ մտցնեն այս կամ այն բառի հեղինակային պարկանելության հարցում, և դա միանգամայն բնական կդիպվի:

Մեսրոպահունչ «Մեսրոպ Մաշտոցի լեզվով հնչող, հայերեն», փխր. «հարագար, նվիրական» իմաստներն ունեցող բառը, օրինակ, երեք անգամ հանդիպում է Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսի (1936-1999) «Նող, մարդ և գիրք» գրքում (Անթիլիաս, 1991): Այսպես՝ Նախաբօնական է ... *մեսրոպահունչ* պարարագին (էջ 145), Նուախօսի միւս ծայրէն, կարծես Արարայրի դաշտի մէկ մոռցում անկիւնէն, *մեսրոպահունչ* ձայնով անուս կ'արտասանուի (էջ 133), ...և իմ մայրենի *մեսրոպահունչ* լեզուով կը պարասխանէ (էջ 136):

Նայրնի է, որ *մեսրոպահունչ* բառը գործածել է նաև սփյուռքահայ բանասրեղծ Մուշեղ Իշխանը (1914-1990) «Բու լեզուդ» հանրահայտ բանասրեղծության մեջ.

Մեզմէ առաջ հնչած է մէկն այսքան ջինջ,

Այսքան քնքուշ՝ *մեսրոպահունչ* հայ լեզուն:

Բանասրեղծությունը գերելով է բանասրեղծի «Ոսկի աշուն» ժողովածուի մեջ (Բեյրութ, 1963), անթվակիր: Գիրքը բաժանված է ենթամասերի, որոնք ներկայացնում են բանասրեղծի փարբեր փարիներ քերթվածները: «Բու լեզուդ» բանասրեղծությունը

¹⁴ Բանասրեղծի երկերի ժողովածուում նշվում է 1946 թվականը (*Գեղամ Սարյան*, Բանասրեղծություններ և պոեմներ, Երևան, 1982, էջ 126), այնինչ ԱՐԵՎԱԿ-ը լրագրային այսպիսի խոմ է փախ՝ «Երևան», 18.07.1947:

¹⁵ Գարեգին Բ. Կաթողիկոս, Նայ մարդը՝ Նայ գիրքին դիմաց, Անթիլիաս, 1990, էջ 81:

¹⁶ Նայկանուշ Մեսրոպան, Գարեգին Ա. Ամենայն Նայոց Կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրեալ, 2000, էջ 214, 218-220:

գերեզմանում է 1949-ից հետո սրբեցված գործերի շարքում: Այսինքն՝ բառի կազմությունը պետք է վերագրել 1950-1962/3 ժամանակահատվածին: Այս դեպքում, մեր կարծիքով, ավելի հավանական է, որ բառի հեղինակ ճանաչվի Մուշեղ Իշխանը:

Մեսրոպարյու բառը երջանկահիշատակ կաթողիկոսը գործածել է «Ան-ժամանակը ժամանակին մեջ» գրքում (Անթիլիաս, 1989, Ս. Էջմիածին, 1995)։ «Ես հո՛ն եմ՝ Օշականի մեջ, իմ արժանի առաքելային և իմ Անարարանին հայերենախօսության սկզբնածին վարդապետին **մեսրոպարյու** ու յառերժաբարբառ շիրմին վրայ» (էջ 147), իսկ պոլսահայ բանաստեղծ Զահրապը «**Մեսրոպարյու**» վերնագրով բանաստեղծություն ունի «Կապույտ երկինք» հատորյակում (Սյամբուլ, 1971)¹⁷։ Այսպես էլ բառի սրբեցումը ճիշդ կլինի կապել Զահրապի անվանը։

Երջանկահիշատակ կաթողիկոսը **մեսրոպածին** բառը «Մեսրոպ Մաշտոց ծնած» իմաստով գործածել է «Նայ մարդը՝ Նայ գիրքին դիմաց» գրքում (Անթիլիաս, 1990, էջ 38)։ «Ինչո՞ւ գիս ծնաւ Ս. Մեսրոպ, - կ'աղաղակէ Նայ Գիրքը, - եթէ գիս պիտի լըէին **մեսրոպածին** հայ ազգին այսօրուան գաւակները»։ Այս բառը նա հնչեցրել է 1981 թ. Նայ գրքի չորրորդ ցուցահանդեսի բացման առթիվ ասված «Նայ գիրքը՝ փազնապը Նայուն» վերնագրով խոսքում։

Նույն **մեսրոպածին** բառը, սակայն այլ՝ «Մեսրոպ Մաշտոցի երկնած՝ սրբեցած՝ հորինած» իմաստով երեք անգամ գործածված ենք փնտնում սփյուռքահայ բանաստեղծ Ժազ Նակոբյանի «Նայապրտվի» գրքում (Բեյրութ, 1970)¹⁸։

Եւ անգիտա՛կ՝ հայ երէկուան,
Իր ժառանգին արմենական,
Իր հայրենի հող ու շողին,
Իր Մասիսին աստուածաւանդ
Ու մանաւանդ՝
Այբուրենին **մեսրոպածին** (Ողբ հայապրտվի, էջ 24)։

Գոյն գոյն, գիծ գիծ, առէջ առէջ,
Միտունարոյր թուղթերու մէջ,
Դրոշմուած՝ հող ու քարի
Իրաքանչիւր բջիջի մէջ.
Առած մարմին՝
Իբր Այբուրեն **մեսրոպածին**... (Գաղթի ուրբեր, էջ 188)

Ունի՛ս, փղա՛ս,
Մեսրոպածին Գիրն Նայերէն (Դաս փոկոնութեան, էջ 371)։

Սրանք ավելի վաղ գործածություններ են։ Փաստորեն **մեսրոպածին** բառի իբրև

¹⁷ Տե՛ս **Դավիթ Գյուրջինյան**, նշվ. աշխ., էջ 64։

¹⁸ Այսուհետև Ժ. Նակոբյանի այս գրքից բերվող բոլոր օրինակների կողքին փակագծերում փոխվում են բանաստեղծության վերնագիրը և գրքի համապատասխան էջը։

ձևախմաստային միավորի սրեղծող պիտի համարել բանաստեղծ Ժ. Նակոբյանին: Սակայն չպիտի անտեսենք այն հանգամանքը, որ Նայոց Նայրապետի խոսքում բառը գործածվել է նոր իմաստով, ուստի իմաստային նորաբանություն է (այդ առումով միանգամայն ճիշդ է վարվել Ն. Մեսրոպյանը՝ բառը գերեզմանով իր կազմած բառարանի բառացանկի մեջ):

Եթե մեր ճշգրտումներն ընդունելի են, ապա Ամենայն Նայոց Գարեգին Առաջին Կաթողիկոսի բառակերպումներ պիտի համարվեն *Մեսրոպ* և *Մաշտոց* բաղադրիչներով կազմված ինը բառեր՝ *մաշտոցաշունչ, մեսրոպաբար, մեսրոպաբարբառ, մեսրոպագիծ, մեսրոպահեղ, մեսրոպահյուս, մեսրոպանման, մեսրոպասնունդ, մեսրոպաստեղծ*, մեկը՝ *մեսրոպածին*-ը՝ իմաստային նորաբանություն:

Մեսրոպ և *Մաշտոց* բաղադրիչներով կազմված բառեր առհասարակ շար կան գործածված Ժազ Նակոբյանի բանաստեղծական խոսքում: Դրանցից մի քանիսի մասին վստահաբար կարող ենք ասել, որ հեղինակային նորակազմություններ են, մանավանդ որ եզակի գործածություններ են: Անավասիկ մի քանի օրինակ՝

մեսրոպաձայն «Մեսրոպ Մաշտոցի լեզվով հնչող», փխբ. «ժարագար, նվիրական».

Ի՞նչպես րեսներ ան հայ բառին
Աղամանդը խորածածուկ,
Ի՞նչպես լսեր հայերենի
Շարականը *մեսրոպաձայն* (Երախայրիք, էջ 68):

մեսրոպամարտ «մշակութային ինքնության համար մղվող մարտ»

Չէ՛ կարելի
Որ դարատր խառաբին դեմ
Մեսրոպամարտ մը շահինը՝

Եւ յեպոյ գանք
Խորշ մը անտալյալ ու մոռյալ... (Անցեալ և ներկայ, էջ 413)

մեսրոպաշահ «Մեսրոպի ուժով շահող, հայախոս»

Մասիսը երբեք չէ՛ պարպուած,
Չէ՛ բանկուած
Քանի դեռ Այբուրենի
Կայ նիզակը *մեսրոպաշահ*,
Կայ դրօշակը աննահանջ (Լուսաբաց, էջ 59):

մեսրոպավառ «Մաշտոցի վառած, բորբոքած»

Ուր կանթեղի պէս ոսկեսփիւռ

Կը շողայ Բանն մեր *մեսրոպավառ* (Ողբ հայապրովի, էջ 30):

մեսրոպավայլ «Մեսրոպ Մաշտոցի շուրն ու փայլն ունեցող»

Սուրբէր նման Լուսատուրչի

Ու հանճարներ *մեսրոպավայլ...* (Նոր գինանշան, էջ 348)

Այդ բառերը, որպէս կանոն, բանաստեղծական են, ուշագրավ կազմութիւններ, որոնք, սակայն, ժամանակի ընթացքում դուրս չեն եկել տվյալ ստեղծագործողի բառապաշարի շրջանակներից:

Երբեմն էլ այս կամ այն բառը միայն նույն հեղինակն է գործածել, այն էլ մեկից ավելի անգամ: Օրինակ՝ **մեսրոպահրաշ** «մեսրոպյան հրաշքով ստեղծված» նորակազմությունը Ժ. Նակոբյանը գործածել է երեք անգամ (ընդ որում մեկ բանաստեղծության մեջ՝ երկիցս): Այս դեպքում դյուրին լուծվում է հեղինակի հարցը (ճշգրտման ենթակա է լոկ բառի ստեղծման փարսիովը. այս դեպքում կողմնորոշիչ կարող է լինել գրքի հրապարակման փարսիովը):

Քեզ կ'առանդեմ, հայկա՛կ փղառ,

Մեսրոպահրաշ բարբառը այս... (Տեսիլքը, էջ 290)

Այս փեսիլքո՛վ Սահակը պերճ

Գրի առաւ փեպուր փեպուր

Մեսրոպահրաշն աղամանդեալ... (Տեսիլքը, էջ 288)

Շուշանասիրտ հայկուհիներ

Եւ հայկակներ վարդահասակ

Շրթո՛ւնք շրթո՛ւնք կը բողբոջին

Մեսրոպահրաշ բարբառին՝

Թե՛ւ օտար արեւի տակ... (Աշխարհակալ, էջ 232)

Ժ. Նակոբյանի չափածո փողերում ընդհանրապէս ցայտունորեն աչքի են ընկնում անձնանուններից կերտված բազմաթիվ դիպվածային կազմութիւններ՝ *հայկաշունչ, փրդապանուն, գրիգորաբար, նարեկարույր, փարդանասրտի, նաղաշածին, զոհրասպկուտ, չարենցորեն* և այլն: Այս երևույթը բնութագրական է քերթողի բանաստեղծական խոսքի համար, բնորոշ՝ նրա բառաստեղծական փոխնիկային: Սակայն բանաստեղծի բառակազմական հմտությունը լիարժէք դրսևորվել է *Մեսրոպ* և *Մաշտոց* անուններից բառեր կերտելիս:

Այսօր մեր ձեռքի տակ եղած փաստական նյութի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ ամենայն հավանականությամբ Ժ. Նակոբյանի բառակերպումներն են՝ *մեսրոպաբորբ, մեսրոպագեղ, մեսրոպագույն, մեսրոպագոծ, մեսրոպաթույր, մեսրոպածին, մեսրոպակերտ, մեսրոպակուփ, մեսրոպակուտ, մեսրոպահամ,*

մեսրոպահրաշ, մեսրոպաճայն, մեսրոպաճույլ, մեսրոպամարտ, մեսրոպանայ, մեսրոպաշահ, մեսրոպասեր, մեսրոպասյուն, մեսրոպասույզ, մեսրոպավանդ, մեսրոպավառ, մեսրոպավեպ, մեսրոպասարտ, մեսրոպասրիպ, մեսրոպասրտի, մեսրոպասրուն, մեսրոպափայլ, մեսրոպաքար, մեսրոպել, մեսրոպեղեն, մեսրոպենի, մեսրոպերզակ, մեսրոպորեն, մաշպոցաբար, մաշպոցարույր, մաշպոցաշեն, մաշպոցաշող, մաշպոցավեպ, մաշպոցասրուն, մաշպոցել, մաշպոցություն: Ընդամենը 41 նորակազմություն, որոնցից 33-ը կազմված են **Մեսրոպ** բաղադրիչով:

Բանաստեղծի խոսքում հանդիպող բառերից մեկ-երկուսի հեղինակային պատկանելության հարցը պահավին ճշգրտման կարիք ունի, ինչպես՝ *մաշպոցագիր* (Ժ. Նակոբյանից բացի այլ գործածողներ էլ կան): Ընդհանրապես այլոց կազմածները ևս հաշվառելով նկատում ենք, որ **Մեսրոպ** բաղադրիչով կազմվածները զգալապես գերակշռում են **Մաշպոց**-ով կազմվածների համեմատ:

Ուշագրավ է, որ մեզ հեղաբեքող բառերից մի քանիսը դարձել են Ժ. Նակոբյանի բանաստեղծությունների, շարքերի կամ գրքերի վերնագրեր, ինչպես՝ «Մեսրոպաշունչ», «Մեսրոպարքով», «Մեսրոպարուն», «Մեսրոպավեպ», «Մաշպոցավեպ» (հմմտ. Զարեհ Խրախունի՝ «Մեսրոպարուն», Զահրաբ՝ «Մեսրոպարույր»):

Ակնհայտ է, որ Ժագ Նակոբյանը և Գաբրիել Առաջինն են **Մեսրոպ** և **Մաշպոց** բաղադրիչներով առավել շար բառեր կազմողները (ևսև գործածողները):

Մեսրոպ Մաշպոց անվան բաղադրիչներով այլ բառերի դեպքում գործ ունենք ուրիշ հեղինակների (գործածողների) հետ: Դրանք հայերենագետ գիտնականներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, լրագրողներ են, արևելահայ և արևմտահայ: Անավասիկ մի քանի օրինակներ, որոնք սխալված են մամուլի և պարսպետակ գրականության էջերում.

մեսրոպագիություն «գիություն Մեսրոպ Մաշպոցի, նրա կյանքի և գործունեության, հայ գրերի ստեղծման և հարակից հարցերի մասին»

«**Մեսրոպագիություն**» հերթական խնդիրը պետք է համարել այն հարցի լուծումը, թե...» (Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշպոց / Նայկական գրերի ու մարենագրության սկզբնավորումը, Երևան, 1962, էջ 49):

մեսրոպագիր «մեսրոպյան պառերով գրված, մեսրոպարա»

«Նայ ժողովուրդն այսօր **Մեսրոպագիր**¹⁹ հայերենով զարգացնում է իր մշակույթը» (Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշպոցը որպես իր դարաշրջանի հանճարեղ արտահայտիչ, Նայկական ՄՍՈՒ ԳՎ Տեղեկագիր հասարակական գիությունների, 1962, հ. 5, էջ 12):

մաշպոցահիմն «Մաշպոցի հիմնած»

«**Մաշպոցահիմն** դպրոցներում քերականությունը առաջին առարկաներից էր, որ դասավանդում էին» (Ա. Ս. Մաթևոսյան, Մովսես Խորենացին և Աթանաս Տարնոացու ժամանակագրությունը, «Պարմա-բանասիրական հանդես», 1989, հ. 1, էջ 228):

մեսրոպադրոշմ «իր վրա Մեսրոպ Մաշպոցի դրոշմն ունեցող, հայկական»

¹⁹ Բնագրում մեծատառ է. այսօրվա կանոնով գրվում է փոքրատառ:

«Նրա խոսքերով՝ «թեմը ողողված է նշանավոր վանքերով, եկեղեցիներով ու արքայեղիներով...», որոնք անգնահատելի հարստություններ են, մեր *մեսրոպապետչոմ* ինքնության արքայապետություններ» («Ազգ», 21.06.2003 - ներխուժված են լրագրող Ռուզան Պողոսյանի և Նավասարդ եպս. Կոնյանի խոսքերը):

մեսրոպապոն «Մեսրոպի միջոցով Կոնյա դարձած»²⁰

Մեսրոպապոն այբուբեն (բանաստեղծության վերնագիր է, գիրքը ևս կոչվում է «Մեսրոպապոն» (Սրաբյու, 2005) - պոլսահայ բանաստեղծ Զարեն Խրախունի):

մեսրոպահուշ «Մեսրոպ Մաշտոցի հուշը՝ հիշարարկը՝ ոգին պահող»

«Գլխավորում ոչ հեռու գտնվող Ոսկեհասկը Շմավոն Թորոսյանի հայրենի գյուղն է, որտեղ նա ծնվել է Տարոնի *մեսրոպահուշ* Նացեկաց գյուղից եղեռնապարծ Առաքել շինականի ընկերակցությամբ» («Ազգ», 11.09.2006 - հեղինակի անուն-ազգանունը համառոտագրված է՝ Գ. Մ.):

մաշտոցապահ «Մաշտոցին իր մեջ պահող՝ ամփոփող» և **մաշտոցապապոն** «Մաշտոցի մասին պապմոլ՝ նրան վերաբերող»

«*Մաշտոցապահ*, մաշտոցաշունչ գյուղում այս Օշական խաչքարեր կան, հնագույն ամրոցների բեկորներ, երկու եկեղեցի (Կարինե Արսենյան, *Մաշտոցապապոն*՝ Օշականյան, Երևան, 2006, էջ 12)»:

մաշտոցակերպ «Մեսրոպ Մաշտոցի կողմից կերպված՝ սրբեղծված»

«Իսկ նա գինված է *մաշտոցակերպ* 36 (+3) հսկաների անսասան ոգով» (Գևորգ Վկա, Խմբագրի վկայությունը / Վ. Սարգսյան, «Մենախոսություն երկուսով», Երևան, 2008, էջ 61):

մաշտոցավանդ «Մեսրոպ Մաշտոցից ավանդված»

«Եր խօսեր Նայասարն, կը խօսեր Նայ ժողովուրդի հազարամեայ հայկեան ոգին, կը ցնծար *Մաշտոցաւանդ* դարստոր ուխտը» (Սարգիս Կիրակոսյան, «Ազգակ», 27.01.2012):

Ներաբրքրական մի իրողություն է նկատելի: Երբեմն միևնույն տեքստում գործածված ենք տեսնում *Մեսրոպ* բաղադրիչով կազմված մեկից ավելի նորակազմ բառեր: Օրինակ՝ **մեսրոպալույս** «Մեսրոպ Մաշտոցի լույսով ճառագող» և **մեսրոպածոր** «Մեսրոպից հոսող՝ ծորացող» հեղինակային նորակազմություններն ենք գտնում Անդրանիկ Զեյնիյանի «Նայ լեզվին» ծավալուն բանաստեղծության մեջ.

Ալիւնով իր *մեսրոպալոյս*

Կորով Կուրա և այնքան յոյս,

Որ երգեմ քեզ մինչ վերջին յոյս...

²⁰ Այս բառը հետազոտում գործածվել է նաև գոյականի արժեքով՝ «Մեսրոպ Մաշտոցին նվիրված Կոնյա խմատով. «Սիրելի՛ Պրն. Խրախունի, այսօր *Մեսրոպապոն* է, ինչպես ինձ յուշել է ժամանակին Ջեր համայնքի միսս հսկան՝ Ռուպեր Նապրեճեանը» («Ազգ», 13.09.2012 - Սուրեն Դանիելյան):

Ո՛վ հայ լեզու **Մեսրոպածոր**,
Նայուն քրտած ձօն երկնառք...²¹

Ի դեպ, այս նույն բանասերեղծության մեջ գործածվել են նաև **մեսրոպապատ** և **մեսրոպագիր** բառերը: Եւ դա պարահական չի արվել, այս կարգի բառերի մեկերեղծումը սերեղծագործական հստակ նպատակադրման հերկանք է:

Կամ **մեսրոպահեղք** «Մեսրոպի հեղքը պահած, Մեսրոպի հեղքն ունեցող» և **Մեսրոպասերն** «Մեսրոպի արված շքեղությունը՝ պերճանքն ունեցող» հեղինակային նորակազմությունները Գևորգ Քրիստիյանի «Մեսրոպապատ մեծ հրաշքով» բանասերեղծության մեջ.

Ու իմ հայոց **Մեսրոպահեղք**
Բավիղներով գնում ենք դեռ...
Բիրբ դարերի մղձավանջում
Նայոց հրէ և հրաշուն **Մեսրոպասերն**
Լույս գրերով բյուր-բյուրավոր²²...

Այսպեղ էլ խոսքային համապարասխան միջավայր սերեղծելուն նպաստում են վերնագրի **մեսրոպապատ**, ինչպես նաև բուն արեքսպային և մինչ այդ գործածական դարձած **մեսրոպաշուն** և **մեսրոպածին** բառերը:

Նայերերը արակավին չի սպառել **Մեսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով նոր բառեր կազմելու հնարավորությունները: Եթե հաշվի առնենք միայն այն հանգամանքը, որ **Մեսրոպ** բաղադրիչով արձանագրված բառերը անհամեմատ շատ **Մաշտոց** բաղադրիչով կազմվածներից (մտարվորապես 71/28 հարաբերակցությամբ), ապա կարող ենք ասել, որ շուրջ երեք արանյակից ավելի նոր բառ սերեղծելու հավանականություն կա միայն սրանց համարանության (նմանակության) հիման վրա. **մաշտոցաշող**-ի օրինակով սերեղծագործողը կարող է կերպել **մեսրոպաշող**-ը, **մեսրոպածին**-ի հեղևողությամբ՝ **մաշտոցածին**-ը: Բնականաբար, սպասելի են նաև այլ՝ գոյություն ունեցողներից միանգամայն արբեր նորակազմություններ (ամենայն հավանականությամբ դրանք կրկին գեղարվեստական և հրապարակախոսական ռճերի միավորներ կլինեն):

Մենք անդրադարձանք **Մեսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բառերի մի մասին միայն: Բառակազմական այս փնջի միավոր հանդիսացող բազմաթիվ բառերի սերեղծման ժամանակը և հեղինակներին պարզելու որոնումները դեռևս շարունակվում են: Միաժամանակ շարունակվում է բառակազմության գործընթացը:

Ամփոփենք:

1. Ամենավաղ վկայվածը **մեսրոպեան** բառն է, առաջին գործածողը՝ Մովսես Խորենացին (Ե. դար):

21 «Նայոց լեզու», կազմեց եւ խմբագրեց՝ Յովսէփ Նալպանյան, Գլենդել-Լոս Անջելես, 2012, էջ 87, 89: Բառերից մեկի փոքրաբառով, մյուսի՝ մեծաբառով գոյությունը հիշյալ գրքից է:

22 Նույն գրքում, էջ 241: Չենք քննարկում այն հարցը, թե հիշյալ նորակազմությունն արդյոք հաջողված է, թե՛ ոչ: Տվյալ պարագայում մեզ հետաքրքրողը բառի սերեղծման փաստն է:

2. Ժամանակագրական առումով երկրորդը *Մաշտոցյան / մաշտոցյան* բառն է (ԺԹ. դար), հաջորդները՝ *մեսրոպաստո, մեսրոպաշունչ, մեսրոպաշար* և այլն (Բ. դար):

3. **ՄՆսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բառերի ճնշող մեծամասնությունը Բ. դարի ծնունդ է: Այս կարգի բառեր կազմվում են նաև մեր օրերում:

4. **ՄՆսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով բառեր կազմել են հայերենագետ գիտնականներ, գրողներ, հոգևորականներ, լրագրողներ:

5. Կան հեղինակներ, որոնք **ՄՆսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով բառեր կազմելու (ինչպես և գործածելու) «հակվածություն» ունեն: Ամենաշար բառեր կազմել են սփյուռքահայ բանաստեղծ Ժազ Նակոբյանը (չորս տասնյակ) և երջանկահիշատակ Գարեգին Առաքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը (մեկ տասնյակ):

6. **ՄՆսրոպ Մաշտոց** անվան բաղադրիչներով կազմված բառերը համահայերենյան են. նոր և նորագույն շրջանների բառերը կազմվել են թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ «տարածքներում»:

7. Նավանական է, որ համաբանության հիման վրա **ՄՆսրոպ** և **Մաշտոց** բաղադրիչներով այլ բառեր ևս սրելով են ապագայում՝ այս կամ գալիք դարերում: